ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ԽՈՐՀՈՒՐԴ

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

30 նոյեմբերի 2016 թվականի **թիվ 28** քաղ. Մոսկվա

Եվրասիական տնտեսական միության շրջանակներում գյուղատնտեսական բույսերի սերմերի շրջանառության մասին համաձայնագրի նախագծի վերաբերյալ

1. Հավանություն տալ Եվրասիական տնտեսական միության շրջանակներում գյուղատնտեսական բույսերի սերմերի շրջանառության մասին համաձայնագրի նախագծին (կցվում է), եւ այն ուղարկել Եվրասիական տնտեսական միության անդամ պետություններ՝ ներպետական ընթացակարգեր անցկացնելու:

2. Խնդրանքով դիմել Եվրասիական տնտեսական միության անդամ պետություններին մինչեւ 2017 թվականի ապրիլի 3-ը Եվրասիական տնտեսական հանձնաժողովին տեղեկացնել սույն կարգադրության 1-ին կետում նշված

համաձայնագրի ստորագրման համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգեր անցկացնելու մասին:

3. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում Եվրասիական տնտեսական միության պաշտոնական կայքում դրա հրապարակման օրվանից:

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի անդամներ՝

Հայաստանի Հանրապետությունից՝	**Բելառուսի Հանրապետությունից՝**	**Ղազախստանի Հանրապետությունից՝**	**Ղրղզստանի Հանրապետությունից՝**	**Ռուսաստանի Դաշնությունից՝**
Վ. Գաբրիելյան	**Վ. Մատյուշեւսկի**	**Ա. Մամին**	**Օ. Պանկրատով**	**Ի. Շուվալով**

Նախագիծ

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

Եվրասիական տնտեսական միության շրջանակներում գյուղատնտեսական բույսերի սերմերի շրջանառության մասին

Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունները, այսուհետ՝ անդամ պետություններ,

հիմնվելով «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի վրա,

ելնելով գյուղատնտեսական բույսերի սերմերի շուկայի զարգացման եւ անդամ պետությունների՝ մրցունակ գյուղատնտեսական արտադրանքի արտադրության ծավալների ավելացման նպատակով գյուղատնտեսական բույսերի սերմնաբուծության ոլորտում համագործակցության մեջ անդամ պետությունների փոխադարձ շահագրգռվածությունից,

ճանաչելով Եվրասիական տնտեսական միության (այսուհետ՝ Միություն) շրջանակներում գյուղատնտեսական բույսերի սորտերի շրջանառության, սորտերի փորձարկման եւ գյուղատնտեսական բույսերի սերմնաբուծության ոլորտներում պահանջների միասնականացման նպատակահարմարությունը,

պահպանելով փոխադարձ հարգանքի, հավասարության եւ հրապարակայնության սկզբունքները,

համաձայնեցին ներքոնշյալի մասին.

Հոդված 1

Սույն Համաձայնագրի նպատակներով օգտագործվում են հասկացություններ, որոնք ունեն հետեւյալ իմաստը՝

գյուղատնտեսական բույսերի սորտերի միասնական ռեեստր՝ ընդհանուր տեղեկատվական ռեսուրս, որը տեղեկություններ է պարունակում ազգային ռեեստրներում ընդգրկված գյուղատնտեսական բույսերի սորտերի մասին.

սորտի փորձարկում՝ սորտի տնտեսական եւ կենսաբանական հատկությունների, ինչպես նաեւ սորտի տարբերակիչ հատկանիշների, միատարրության եւ կայունության որոշման միջոցառումներ՝ ազգային ռեեստրում այն ընդգրկելու նպատակով.

ազգային ռեեստր՝ անդամ պետությունների տարածքում օգտագործման համար արտոնված (թույլատրված, երաշխավորվող) գյուղատնտեսական բույսերի սորտերի՝ անդամ պետության օրենսդրությանը համապատասխան ձեւավորվող ռեեստր.

գյուղատնտեսական բույսերի սերմերի շրջանառություն՝ մեկ անդամ պետության տարածքից մյուս անդամ պետության տարածք (այդ թվում՝ Միության անդամ չհանդիսացող պետության տարածքով) գյուղատնտեսական բույսերի սերմերի տեղափոխումը, դրանց պահպանումն ու իրացումը.

գյուղատնտեսական բույսերի սերմերի ցանքային (տնկման) որակներ՝ գյուղատնտեսական բույսերի սերմերի որակի այն ցուցանիշների ամբողջությունը, որոնք բնութագրում են ցանքի (տնկման) համար սերմերի պիտանիությունը.

գյուղատնտեսական բույսեր՝ հացահատիկային, հացահատիկաոլոռային, ձավարատու, կերային, տեխնիկական, յուղատու, եթերայուղատու, բանջարային, բոստանային, պտղատու, հատապտղատու, դեղատու մշակաբույսեր, ինչպես նաեւ կարտոֆիլ եւ խաղող.

գյուղատնտեսական բույսերի սերմեր՝ բույսերի բուն սերմերը, տնկիները, պտուղները, բարդ պտուղների մասերը, պտղաբույլերը, կոճղեզները,

պալարները եւ բույսերի այլ՝ գեներատիվ եւ վեգետատիվ մասեր, որոնք նախատեսված են գյուղատնտեսական բույսերի սորտերի բազմացման եւ (կամ) վերարտադրության համար.

սերմնաբուծություն՝ գյուղատնտեսական բույսերի սերմերի արտադրության, փոխադրման, պահպանման, իրացման եւ օգտագործման հետ կապված գործունեություն.

սորտ՝ բուսաբանական տաքսոններից ստորադասի շրջանակներում գյուղատնտեսական բույսերի խումբ, որը որոշվում է տվյալ գենոտիպը կամ գենոտիպերի համակցությունը բնորոշող հատկանիշների արտահայտվածության աստիճանով, միեւնույն բուսաբանական տաքսոնի գյուղատնտեսական բույսերի այլ խմբերից տարբերվում է մեկ կամ մի քանի հատկանիշներով կամ հատկանիշների արտահայտվածության աստիճանով եւ կայուն է.

գյուղատնտեսական բույսերի սերմերի սորտային որակներ՝ հատկանիշների ամբողջություն, որը բնորոշում է գյուղատնտեսական բույսերի սերմերի պատկանելությունը որոշակի սորտի:

Հոդված 2

Սույն Համաձայնագիրը կարգավորում է Միության շրջանակներում գյուղատնտեսական բույսերի սերմերի շրջանառության հետ կապված իրավահարաբերությունները՝ բացառությամբ գյուղատնտեսական բույսերի սերմերի, որոնց սորտերի գենային ծրագիրը գենային ինժեներիայի նյութ է պարունակում:

Հոդված 3

1. Միության շրջանակներում գյուղատնտեսական բույսերի սերմերի շրջանառությունն իրականացվում է դրանց սորտային եւ ցանքային (տնկման)

որակների մասին տեղեկություններ պարունակող եւ ռուսերեն լեզվով ու անդամ պետության պետական լեզվով (պետական լեզուներով) ձեւակերպված փաստաթղթերի առկայության դեպքում (եթե դա նախատեսված է անդամ պետության օրենսդրությամբ)։

Եթե գյուղատնտեսական բույսերի սերմերը մշակվել են քիմիական կամ կենսաբանական պատրաստուկներով, Միության շրջանակներում դրանց շրջանառությունն իրականացվում է փաթեթավորված տեսքով՝ ի թիվս սույն կետի առաջին պարբերությունում նշված փաստաթղթերի, նաեւ այդ սերմերն ուղեկցող փաստաթղթերի եւ դրանց մականշվածքի (պիտակի) վրա նշվող քիմիական կամ կենսաբանական պատրաստուկի անվանման մասին ռուսերեն լեզվով եւ անդամ պետության պետական լեզվով (պետական լեզուներով) ձեւակերպված փաստաթղթերի առկայության դեպքում (եթե դա նախատեսված է անդամ պետության օրենսդրությամբ)։

2. Անդամ պետությունները ճանաչում են գյուղատնտեսական բույսերի սերմերի սորտային եւ ցանքային (տնկման) որակների մասին տեղեկություններ պարունակող փաստաթղթերը, որոնք տրվել են մյուս անդամ պետությունների կողմից՝ անդամ պետությունների առաջարկությունների հիման վրա Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կողմից (այսուհետ՝ Հանձնաժողով) հաստատված ցանկի համաձայն:

Հոդված 4

1. Միության շրջանակներում գյուղատնտեսական բույսերի սերմերի շրջանառության հետ կապված գործունեության տեղեկատվական ապահովման նպատակով Հանձնաժողովը ձեւավորում է գյուղատնտեսական բույսերի սերմերի միասնական ռեեստր (այսուհետ՝ միասնական ռեեստր)։

2. Միասնական ռեեստրը ձեւավորվում է ազգային ռեեստրներում սորտերի մասին պարունակվող եւ անդամ պետությունների կողմից էլեկտրոնային

տեսքով, Միության ինտեգրացված տեղեկատվական համակարգի օգտագործմամբ՝ Հանձնաժողովին ներկայացվող տեղեկությունների հիման վրա։

Միասնական ռեեստրի ձեւավորման եւ վարման կարգը հաստատվում է Հանձնաժողովի կողմից։

Հոդված 5

Գյուղատնտեսական բույսերի սորտային նույնականացում անցկացնելու մոտեցումների միասնականացման, գյուղատնտեսական բույսերի սերմերի սորտային եւ ցանքային (տնկման) որակների որոշման նպատակով անդամ պետություններն ապահովում են Հանձնաժողովի խորհրդի կողմից սահմանվող միասնական մեթոդների կիրառումը։

Հոդված 6

Անդամ պետությունները միջոցներ են ձեռնարկում սորտերի փորձարկման եւ սերմնաբուծության խնդիրները կարգավորող՝ իրենց օրենսդրության ներդաշնակեցման ուղղությամբ։ Անդամ պետությունների օրենսդրության ներդաշնակեցմանն ուղղված միջոցների ցանկը եւ այդ ներդաշնակեցման ժամկետները սահմանվում են Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի կողմից։

Հոդված 7

Մինչեւ սույն Համաձայնագրի 5-րդ հոդվածին համապատասխան ընդունված՝ Հանձնաժողովի խորհրդի ակտեր ուժի մեջ մտնելն անդամ պետություններում կիրառվում են գյուղատնտեսական բույսերի սորտային նույնականացում անցկացնելու, գյուղատնտեսական բույսերի սերմերի սորտային եւ ցանքային

(տնկման) որակների որոշման մեթոդները, որոնք սահմանված են անդամ պետությունների օրենսդրությամբ։

Հոդված 8

Սույն Համաձայնագիրը Միության շրջանակներում կնքված միջազգային պայմանագիր է եւ Միության իրավունքի մաս է կազմում։

Հոդված 9

Սույն Համաձայնագրի մեկնաբանման եւ (կամ) կիրառման հետ կապված վեճերը կարգավորվում են «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրով սահմանված կարգով։

Հոդված 10

Անդամ պետությունների պայմանավորվածությամբ սույն Համաձայնագրում կարող են կատարվել փոփոխություններ, որոնք ձեւակերպվում են առանձին արձանագրություններով եւ կազմում են սույն Համաձայնագրի անբաժանելի մասը։

Հոդված 11

Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում սույն Համաձայնագիրն ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերն անդամ պետությունների կողմից կատարվելու մասին վերջին գրավոր ծանուցումն ավանդապահի կողմից դիվանագիտական ուղիներով ստանալու օրվանից 30 օրացուցային օրը լրանալուց հետո։

Կատարված է քաղաքում 201 թվականի -ի « »-ին, մեկ բնօրինակից՝ ռուսերենով։

Սույն Համաձայնագրի բնօրինակը պահվում է Եվրասիական տնտեսական հանձնաժողովում, որը՝ որպես սույն Համաձայնագրի ավանդապահ, յուրաքանչյուր անդամ պետությանը կտրամադրի դրա հաստատված պատճենը։

Հայաստանի Հանրապետության կողմից՝	**Բելառուսի Հանրապետության կողմից՝**	**Ղազախստանի Հանրապետության կողմից՝**	**Ղրղզստանի Հանրապետության կողմից՝**	**Ռուսաստանի Դաշնության կողմից՝**